ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/195

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ 26/26-1/7753-2022 գրությամբ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 25.04.2022թ. թիվ ՍՄ//11240-2022 գրության հիման վրա, 02.05.2022թ. թիվ 26/26-1/7753-2022 գրությամբ նախաձեռնել է «Ֆուդսիթի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ֆուդսիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ֆուդսիթի» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ֆուդսիթի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/195 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:45-ին և 13.06.2022թ. ժամը 10:29-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.04.2022թ. թիվ ՍՄ//11240-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ կազմակերպություն) միջև 2022 թվական հունվարի 7-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-1» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր): Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, պայմանագրի 8.5-րդ և 8.15-րդ կետերի համաձայն, օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու առաջարկ: 2022 թվականի ապրիլի 15-ին կազմակերպությունը էլ. փոստի միջոցով ներկայացրել է գրություն՝ պայմանագիրը 98-րդ չափաբաժնի /կարագ/ մասով լուծելու վերաբերյալ խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ 2022 թվականի ապրիլի 22-ին նախարարությունը կազմակերպության հետ կնքված պայմանագիրը մասնակի լուծել է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ձեզ եմ ներկայացնում կազմակերպության կողմից ներկայացված հայտի փաթեթը, վերոնշյալ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, ինչպես նաև պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ ծանուցումը և ընդունած որոշումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/195 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:45-ին և 13.06.2022թ. ժամը 10:29-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/195 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/195 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի միջև 07.01.2022թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. Պայմանագրի հավելված N 2-ով՝ Մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, ըստ պատվիրատուի պահանջի և համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2022 թվական:

3. Ընկերությունը Պատվիրատուին ուղղված էլեկտրոնային գրությամբ 15.04.2022թ. հայտնել է հետևյալը. «Խնդրում ենք Ձեզ, որ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ» ծածկագրով մրցույթի շրջանակներում կնքվելիք պայմանագրերը լուծարեք 98 չափաբաժին /կարագ/ ապրանքատեսակի մասով»:

4. Պատվիրատուն «Ֆուդսիթի» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում նախարարության ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների (ք. Երևան և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք) հետ 2022 թվականի հունվարի 7-ին սննդամթերքի կարիքների բավարարման նպատակով կնքված պայմանագիրը մասնակի լուծում ենք (չափաբաժին 98՝ կարագ),

հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը /կցվում է Ձեր կողմից էլ. փոստի միջոցով ստացված գրությունը/»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 21.04.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.05.2022թ. թիվ 26/26-1/7753-2022 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 25.04.2022թ. թիվ ՍՄ//11240-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի համաձայն՝

1.Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2.Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի միջև 07.01.2022թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրի հավելված N 2-ով՝ Մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, ըստ պատվիրատուի պահանջի և համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2022 թվական:

Ընկերությունը Պատվիրատուին ուղղված էլեկտրոնային գրությամբ 15.04.2022թ. հայտնել է հետևյալը. «Խնդրում ենք Ձեզ, որ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ»

ծածկագրով մրցույթի շրջանակներում կնքվելիք պայմանագիրը լուծարեք 98 չափաբաժին /կարագ/ ապրանքատեսակի մասով»:

Պատվիրատուն «Ֆուդսիթի» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում նախարարության ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների (ք. Երևան և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք) հետ 2022 թվականի հունվարի 7-ին սննդամթերքի կարիքների բավարարման նպատակով կնքված պայմանագիրը մասնակի լուծում ենք (չափաբաժին 98՝ կարագ), հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը /կցվում է Ձեր կողմից էլ. փոստի միջոցով ստացված գրությունը/»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 21.04.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.***

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Այսպիսով՝ արձանագրում եմ, Պատվիրատուն՝ հիմք ընդունելով Ընկերության 15.04.2022թ. գրությունը՝ 98-րդ չափաբաժինը կարագ ապրանքատեսակի մասով լուծելու վերաբերյալ, և լուծելով Պայմանագիրը՝ Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջի հիմքով, այն պայմաններում, երբ Պայմանագրի կատարման վերջնաժամկետ սահմանվել է 25.12.2022թ. և Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված ժամկետը, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, լրացած չեն, այսինքն՝

Պայմանագրի 2.1.7 կետով նախատեսված էական խախտման փաստը վրա հասած չլինելու պայմաններում, գործել է ոչ իրավաչափ, որպիսի պայմաններում գտնում եմ, որ ոչ իրավաչափ Պայմանագրի լուծման արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 02.05.2022թ. թիվ 26/26-1/7753-2022 գրությամբ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**